

Աշակերտական խմբերում բախումների մանկավարժական կանխարգելումը

*Լյուդմիլա Դանիելյան
Անահիտ Հովսեփյան*

*Հանգուցային բառեր. բախում, խումբ, միջանձնային փոխհարաբե-
րություններ, բախումների կանխարգելում, մեթոդներ, մրցույթ, խնդրա-
հարույց իրավիճակ*

Նախաբան

21-րդ դարում կատարված համաշխարհային փոփոխություններն այսօր հանգեցրին մարդու և բնության, մարդու և հասարակության նկատմամբ վերաբերմունքի փոփոխության: Անվստահությունը, բռնու-
թյունը, քաղաքական և տնտեսական ճգնաժամերը, պատերազմական իրավիճակը, շրջակա միջավայրի օրեցօր ավելացող խնդիրները ամենուր ուղեկցում են մարդուն, որոնք էլ առաջացնում են անհանդուրժողակա-
նություն և բախումներ: Հանրակրթական դպրոցներում հանրային անհա-
վասարությունը, աշակերտների և ուսուցիչների ոչ արդյունավետ հաղոր-
դակցումը բախումների առաջացման պատճառ են դառնում: Ժամա-
նակակից դպրոցական կյանքում աշակերտական խմբում բախումների խաղաղ լուծման գործում կարևոր է ուսուցչի՝ որպես կրթական ներդաշ-
նակ միջավայր ստեղծող պատասխանատու անձի դերը: Այստեղ կարևոր է նաև ընտանիքի և դպրոցի համագործակցությունը, ինպես նաև ուսում-
նադաստիարակչական գործընթացում փոխգործուն մեթոդներ, մասնա-
վորապես գրույց, խնդրահարույց իրավիճակների վերլուծություն, դեպ-
քերի ուսումնասիրություն և այլն:

Բախումն իշխանության, կարգավիճակի կամ միջոցների պակասի պատճառով առաջացած պայքար է կողմերի հավակնությունները բավա-
րարելու կամ հակառակորդի նպատակները չեզոքացնելու համար: Միայն խմբում և խմբի ազդեցությամբ է դպրոցականը ձեռք բերում համե-
րաշխ փոխհարաբերությունների փորձ, հասարակական ուղղվածության, զարգացման, անձնականի և հասարակական ուղղվածության զարգաց-
ման ճիշտ փոխհարաբերության փորձ [4, 384]:

Խմբի մեջ դաստիարակչական աշխատանքում գլխավորը, մեր

խորին համոզմամբ, այնպիսի պայմանների ստեղծումն է, որոնց դեպքում դպրոցականը կցուցաբերի ինքնուրույնություն մտքերում, զգացմունքներում, աշխատանքում: Երեխան ինքնուրույն կյանքի առաջին քայլերից սկսում է գործնականորեն ըմբռնել մարդկային փոխհարաբերությունները: Ամեն մի փոխհարաբերության հիմքը աշխատանքն է, գործնությունը, ստեղծագործությունը: Այսպիսով՝ մանկավարժների խնդիրն է դպրոցական կյանքի առաջին օրերից սաներին հաղորդակից դարձնել այնպիսի գործնության, որում մարդն իր սեփական փորձով տեսնի, որ ինքն անում է ինչ-որ էական, հասարակությանն անհրաժեշտ բան, որ այդ աշխատանքը ուրախություն, հպարտություն բերի յուրաքանչյուր անհատին ու խմբին:

Շատ հաճախ երեխան մեծանում է, բայց հաղորդակցման խնդիրները շարունակում են ուղեկցել նրան: Միջանձնային փոխհարաբերությունների համակարգում երեխայի դիրքը ոչ միայն պայմանավորված է մի շարք գործոններով, այլև ինքն էլ անձի զարգացման էական նախադրյալներից մեկն է [3, 191]: Կրտսեր աշակերտների շրջանում բախումների և դժգոհությունների պատճառները հիմնականում նույնն են, ինչ մանկապարտեզում: Նախքան դպրոցական բախումները լուծելու վերաբերյալ խորհուրդ տալը փորձեք օգնել ձեր երեխային վաղ օրերից հարաբերություններ հաստատելու շատ ընկերների հետ: Հակամարտությունների կանխատեսման ժամանակակից մեթոդները կլուծեն խնդիրները՝ առանց երեխայի համար հոգեկան ծանր հետևանքների: Բախումնային իրավիճակները անխուսափելի են: Այնուամենայնիվ, յուրաքանչյուր դեպքից կարելի է արդյունքներ բերել և՛ բացասական, և՛ դրական: Ամեն ինչ կախված է նրանից, թե որքանով են ճիշտ վերլուծվում բախումների պատճառները, և ինչ եզրակացության են հանգել կողմերը: Բախման առաջացման համար անհրաժեշտ նախապայման է բախումնաձին երևույթների առկայությունը: Որպես այդպիսիք կարող են լինել, օրինակ, ընդիմակցի վիրավորահարույց պահվածքն ու արտահայտությունները [2. 53]: Յուրաքանչյուր բախումնային իրավիճակ եզակի է: Այն ունի իր սեփական, հասարակ և ուղղակի նախադրյալները, դրա մասնակիցներն ու լուծման անհատական մեթոդները: Պայմանականորեն դպրոցական միջավայրում կան բախումների մի քանի տեսակներ: Քննենք դրանք:

Հակասություններ դպրոցում աշակերտների միջև

Ամենից հաճախ դրանք արտահայտվում են **դասերի առաջնորդության** համար մղվող պայքարում: Մենք այս դեպքում գործում ենք որպես դիտորդ: Դպրոցականների միջև բախման պատճառ է նաև **տարիքը**: Մանկության սովորական դժգոհություններին զուգահեռ՝ խմբում կան առաջնորդության պայքար և անձնական մրցակցություն: Բախումների պատճառներից ամենավտանազավորը **հանրայինն** է: Լիարժեք ընտանիքի երեխաները հաճախ հակադրվում են թերի ընտանիքների երեխաներին: Արդյունքը կարող է լինել ինչպես կողմերի անվերահսկելի հարձակողականությունը, այնպես էլ հետ քաշվելու փորձը: Շատ կարևոր է ժամանակին հայտարարել խնդիրը և լուծել այն լավագույն կերպով: Հազվադեպ են նաև **էթնիկական բախումները**, երբ դասարանում սովորում են տարբեր էթնիկ խմբերի ներկայացուցիչներ:

Հակամարտությունների փուլերը

1. Նախաբախում (թաքնված փուլ, երբ հակառակորդների միջև որոշակի հակասություն է առաջանում, բայց նրանք դա դեռ չեն գիտակցում և ոչ մի գործողություն չեն ձեռնարկում իրենց դիրքերը պաշտպանելու համար):
2. Հակամարտությունների փոխազդեցություն (հակազդեցության գործուն փուլում, որն իր հերթին բաժանված է երեք փուլերի՝ միջադեպ, սրացում, հավասարակշռված փոխազդեցություն):
3. Բանաձև (դիմակայության ավարտ):
4. Հետբախումնային վիճակ (հնարավոր հետևանքներ):

Որոշ դեպքերում բախումնային իրավիճակը կարգավորվում է խմբի ներսում՝ առանց արտաքին միջամտության: Այնուամենայնիվ, կարևոր է դիտարկել, ուղղորդել և վերահսկել այն: Մենք կարող ենք սկզբնական փուլում լուծել բախումը՝ բացառելով դրա հետագա զարգացումը: Կանխարգելիչ միջոցառումներից մեկը կլինի երեխաների թիմի առավելագույն համախմբվածությունը: Դպրոցներում կարող ենք կազմակերպել տարբեր միջոցառումներ և մրցույթներ: Դպրոցական բախումները խանգարում են դասի գործունեությանը, և այդ պատճառով երբեմն մենք հակված ենք ճնշելու այդպիսի բախումը՝ լուծման պատճառներն ու ուղիները որոշելու փոխարեն: Մեր այս կեցվածքն ամրապնդող այլ գործոններ են դասի ժամանակ բախումները կառուցողական կերպով կար-

գավորելու համար ժամանակի և միջոցների տրոհությունը: Մենք պետք է չխրախուսենք խնդրի վերաբերյալ քննարկումները, բայց և չվախենանք պատճառներն ի հայտ բերելուց, այլապես հակամարտությունը կարող է լուծվել, բայց մինևս մի ժամանակ կործանարար կդառնա միջանձնային հարաբերությունների համար, որովհետև կկուտակվեն անհարմարություններ, թյուրիմացություններ: Այսպիսով՝ անհրաժեշտ է, որ մենք նախապես ենթադրենք հակամարտության առկայությունը, որպեսզի որոնենք այլընտրանքներ այն կառուցողաբար լուծելու համար: Կախված բախման մեծությունից և ուսուցչի պատրաստվածությունից՝ խնդրի լուծման հարցում բախումը կարող է պահանջել հոգեբանի ուղղորդում կամ միջամտություն: Շատ դեպքերում իրավիճակի ճիշտ կանխորոշումը կօգնի կանխելու բախումները: Բախումների յուրաքանչյուր սրմանը նախորդում է նախաբախումնային իրավիճակ, որի միջոցով կարելի է խուսափել հարձակողականությունից: Հակամարտությունը կանխելու ուղիներից մեկը աշակերտներին դիտարկելն է ընդհանուր հետաքրքրությունների և նպատակների հայեցակերպով: Ամեն դեպքում կարևոր է պահը բաց չթողնել: Իսկ եթե հակամարտությունը մտել է գործուն փուլ, անիմաստ է միջոցներ ձեռնարկել այն կանխելու համար: Հակամարտություն կարող է առաջանալ հետևյալի շուրջ.

- Առաջնորդ դառնալու ցանկություն.
- Անձնական թշնամանք.
- Պայքար ճանաչման համար.
- Անպատասխան զգացում.
- Չսիրելը և ամբարտավան գիջող վերաբերմունքը մեկի նկատմամբ:

Երբեմն դպրոցում տարբեր դասարանների երեխաներ են բախվում: Պատահում է նաև, որ դասընկերները խմբերի են բաժանվում: Դպրոցականների և դասընկերների բախումները կարող են մի փոքր այլ բնույթ ունենալ: Տարբեր բախումնային իրավիճակներում մանկավարժը պիտի ցուցաբերի բախումնաբանի որոշակի հատկանիշներ: Այս առումով մանկավարժը պետք է կարողանա ժամանակին ախտորոշել տվյալ բախումնային իրավիճակը, կանխորոշել և, իհարկե, հարթել կամ կանխել այն: Շատ դեպքերում խոսքը վերաբերում է ոչ թե բախումները կանխելուն կամ հարթելուն, այլ դրանք ճիշտ հասկանալուն և գուցե նաև կառավարելուն: Այսինքն՝ դպրոցի կառավարման բաղկացուցիչ մասերից են ոչ միայն բախումների կանխումն ու հարթումը, այլև բախումների կառավարումը:

Բախումնաբանական մանկավարժությունն իր զարգացման տարբեր փուլերում հաշվի է նստում հոգեբանության այն տեսությունների և գիտափորձարարական տվյալների հետ, որոնք ուղղակիորեն առնչվում են բախումների կանխման և հաղթահարման հետ: Բախումների կանխման և հաղթահարման կադապար մշակելիս կարևորվում են հույզերի բարդությունները և անձի հուզական գծերը: Հատկանշական է այն, որ հոգեբանության մեջ տազնապի ամեն մի դրսևորում կարող է բախման պատճառ դառնալ: Ուսուցիչները պետք է կարողանան ժամանակին ախտորոշել իրենց և աշակերտների տազնապները: Ճնշվածությունը նույնպես կարող է բախման պատճառ դառնալ: Մակայն դպրոցականները երբեմն չեն կարողանում մեծահասակների նման թաքցնել կամ զսպել ճնշվածությունը արտահայտելու ցանկությունը: Մանկավարժները բախումնային են համարում նաև թշնամությունը և հարձակողականությունը: Նրանց կարծիքով, եթե մարդիկ ուղղակիորեն միմյանց չեն վիրավորում, վնաս պատճառում, ապա բախումների առաջացման հավանականությունը այնքան էլ մեծ չէ: Մակայն ներդպրոցական կառավարման կադապար ստեղծելիս անհրաժեշտ է հաշվի առնել նշված հուզական բարդությունները և ամեն անգամ ծագող բախմանը մոտենալ շատ մեծ զգուշությամբ, եթե խոսքը վերաբերում է նրանց ախտորոշմանը:

Բախումը հարթելու նպատակ ունեցող մանկավարժը պետք է հաշվի առնի բախմանը ներգրավվածների բախումնաբանական իրազեկության մակարդակը: Ընդհանուր առմամբ՝ կարելի է առանձնացնել հետևյալ մակարդակները.

Առաջին մակարդակ – թե՛ ուսուցիչները, թե՛ աշակերտները բախումները հաղթահարում են ներըմբռնողական մակարդակում:

Երկրորդ մակարդակ – ուսուցիչները տիրապետում են ինչ-որ չափով բախումնաբանական գիտելիքներին, աշակերտները՝ ոչ:

Երրորդ մակարդակ – թե՛ առաջինները, թե՛ երկրորդները տիրապետում են, պատկերացում ունեն, ունեն ցանկություն, ունեն փորձ բախումները հաղթահարելու:

Չորրորդ մակարդակ – դպրոցի դաստիարակության համակարգի կառուցողական բախումների կառավարման գործընթացում աստիճանաբար թե՛ ուսուցիչները, թե՛ աշակերտները յուրացնում են խաղաղարար մարտավարության, խաղաղ համագործակցության մեթոդներն ու միջոցները, հումանիտար հոսքի առարկաններն ուսումնասիրում են

առավել խորությամբ՝ առանձնացնելով բախումնաբանական հայեցակետը:

Ելնելով աշակերտական բախումների վերոնշյալ որոշ տեսակներից՝ ներկայացնենք դրանց կանխարգելման ուղիները.

- հաշվի առնենք սովորողների տարիքային առանձնահատկությունները.
- ստեղծենք դրական պայմաններ՝ առանց բախումների մանկավարժական հաղորդակցության ձևավորման համար.
- համակարգում իրականացնենք հատուկ կազմակերպված աշխատանքներ՝ բախումնային իրավիճակներ չստեղծելու հմտություններ զարգացնելու համար.
- ստեղծենք համագործակցության մթնոլորտ.
- ձգտենք հարաբերությունների և հաղորդակցության պարզության:

Բախումները կանխելու ուղիներից մեկը դիտարկելն է, աշակերտների ընդհանուր հետաքրքրությունների և նպատակների որոնումը: Եթե աշակերտներին միավորում է ինչ-որ նպատակ, շատ խնդիրներ պարզապես հանվում են: Այլ խնդիրներ (խանդը, անձնական դրդապատճառները) լուծվում են անհատապես:

Դպրոցում երեխաների բախումներից խուսափելը և իրավիճակը հարթել փորձելը մեր սուրբ պարտականությունն է: Ինչ էլ որ լինեն դպրոցում երեխաների բախումների պատճառները, մենք պետք է լուծենք դրանցից շատերը: Մենք պետք է սովորեցնենք ոչ միայն գրագիտություն, այլև օգնենք՝ հարմարվելու թիմում, սովորեցնել հաղորդակցվել քաղաքակիթ ձևով, վիճել, պաշտպանել սեփական տեսակետը, զիջել, պատասխանատու լինել իր գոծողությունների համար:

Աշակերտական խմբում բախումները կանխարգելելու նպատակով, ինչպես նաև բարոյական վարքագծի ձևավորման համար կիրառել ենք գրույցի, բանավեճի մեթոդ, իրականցրել ենք խնդրահարույց իրավիճակների վերլուծություն: Կազմակերպել ենք առաձին դասեր «Բախումների առաջացման պատճառները», «Բախումների կանխարգելման հնարավոր ելքերը», «Մանկավարժի դերը բախումնային իրավիճակներում», «Բարությունը կփրկի աշխարհը» թեմաներով: Եվ այս դասերը նպաստել են միմյանց հարգելու, միմյանց լսելու, միասին աշխատելու, տարբեր կարծիքների հետ հաշվի նստելու, բոլորի կողմից մեկ ընդունելի արդյունքի գալու և բարություն սերմանելու գիտակցությանը: Մրանով սովորողները հասկացել են, որ շրջապատի, խմբի նկատմամբ հարգալից լինելով, իրար

լսելով, բախումները հարթելու հստություններ ձեռք բերելով՝ կարողանում են իրենք ու երևույթները տարբեր տեսանկյունից դիտարկել, վերլուծել, ունենալ պատասխանատու վարքագիծ:

Այս ամենի շնորհիվ կարողացել ենք նպաստել խմբի ներսում միմյանց օգնելու, միասին աշխատելու, դրված նպատակին հասնելու կամքի ու օրինակելի վարքի ձևավորմանը:

Եզրակացություն

Այսպիսով՝ եկանք այն եզրակացության, որ աշակերտական խմբերում բախումներ չեն առաջանա, երբ առանց ճնշման փորձենք հաստատել համերաշխություն, կազմակերպենք համընդհանուր դասարանային միջոցառումներ և մրցույթներ, իսկ առաջացման դեպքում մշակենք լուծման տարբերակներ, համաձայնեցված որոշում կայացնենք, հնարավորություն տանք կողմերին արտահայտվելու, ժամանակից շուտ չկատարենք եզրակացություններ, բախումը լուծենք հանգիստ մթնոլորտում:

Գրականություն

1. Ամիրջանյան Յ., Մահակյան Ա., Մանկավարժություն, Երևան, 2004:
2. Եդիգարյան Վ. Մ., Սեդրակյան Ս. Ա., Կառավարման հոգեբանություն, Երևան, 2004, 54 էջ:
3. Կոլոմինսկի Յ. Լ., Մանկական կոլեկտիվի հոգեբանություն, «Լույս», Երևան, 1988, 232 էջ:
4. Կրուտեցկի Վ. Ա., Մանկավարժական հոգեբանության հիմունքներ, «Լույս», Երևան, 1976, 384 էջ:
5. Սուխոմլինսկի Վ. Ա., Կոլեկտիվ ձևավորելու մեթոդիկա, Երևան, «Լույս» 1986, 312 էջ:

Предотвращение конфликтов в ученическом коллективе

Людмила Даниелян

Анаит Овсепян

Резюме

Ключевые слова: конфликт, коллектив, межличностные отношения, предотвращение, методы

В статье представлены причины возникновения конфликтов в ученических коллективах, средства и методы их предотвращения. При формировании ученических коллективов возникают конфликты которых невозможно избежать. В ученических коллективах истоки конфликтов обусловлены разными причинами и преодоление этих конфликтов может способствовать саморазвитию учащихся.

В статье рассматриваются многие постоянно существующие в ученических коллективах проблемы которые с педагогической точки зрения необходимо диагностировать, выявлять и предотвращать. Здесь же конфликты также охарактеризованы как противоположно направленные, несовместимые столкновения тенденций, сопровождающиеся негативными эмоциональными переживаниями во взаимоотношениях ученик-ученик, ученик-учитель. Во время педагогической деятельности педагог сталкивается с различными предконфликтными ситуациями, правильное решение которых обусловлено отмеченными профессиональными и организационными знаниями педагога.

Pedagogical Prevention of Conflicts in the Student Staff

Lyudmila Danielyan

Anahit Hovsepyan

Summary

Key words: a conflict, collective, interpersonal relationships, conflict prevention, methods

The article presents the causes of conflicts emerged in pupil collectives, the means and methods of their prevention. Conflicts inevitably arise during the formation of pupil collectives. The causes of conflict origins in pupil collectives are various and overcoming those conflicts can contribute to the self-development of pupils.

A lot of problems illustrated in the article always exist in pupil collectives and need to be diagnosed, identified and prevented from a pedagogical point of view. In this article, conflicts are described as a clash of tendencies accompanied by oppositely directed, incompatible and negative emotional feelings in the pupil-pupil, pupil-teacher relationships.

During the pedagogical process, the pedagogue encounters different situations, where the correct solution of the problem is conditioned by the pedagogue's professional organizational knowledge.

Ներկայացվել է 14.09.2021 թ.

Գրախոսվել է 21.09.2021 թ.

Ընդունվել է տպագրության 29.11.2021 թ.